Վեցերորդ հաղորդում

Հովվել Աստծու համաձայն

Գրվածքների ընթերցում. Հվի 21:15-17, Ա Պտ 5:2, 2:25, Եփս 4:12-16

I. Հովվել նշանակում է համաբովանդակ քնքուշ հոգատարություն ցուցաբերել հոտի համար՝ Հվի 21:15-17, Գրծ 20:28.

Ա. Հովվությունը ոչխարների բոլոր կարիքները հոգալն է՝ Սղմ 23:

Բ. Բոլոր ոչխարները լավ ապահովման և լավ խնամքի կարիք ունեն:

II. Տիրոջ վերականգնման մեջ այսօր հովվության հրատապ անհրաժեշտություն կա՝ Հվի 21:16, Ա Պտ 5:2.

Ա. Իր օրգանական փրկության մեջ Հայր Աստված մեզ նախ՝ վերածնում է Հոգի Աստծով, այնուհետև՝ հովվում է մեզ Որդի Աստծու՝ որպես մեր Հովվի մեջ, որպեսզի մենք հավիտենապես գոյություն ունենանք և աճենք Նրա կյանքում՝ Հվի 3:6, 10:10, 14-16:

Բ. Հավատացյալներին հովվելը չափազանց կարևոր է այն բանի համար, որ նրանք աճեն աստվածային կյանքում և հասունանան Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Եփս 4:12-16:

III. Հովվությունը կախված է ուսուցումից. եթե մենք չենք կարողանում ուսուցանել, չենք կարողանա հովվել՝ Մտթ 28:19-20, 9:35-36.

Ա. Հովվելը և ուսուցանելը սերտորեն կապված են՝ Եփս 4:11:

Բ. Մեր հովվելը պետք է միշտ ուսուցմամբ լինի, իսկ մեր ուսուցումը պետք է միշտ հովվությամբ լինի՝ Գրծ 2:42, 20:28, Կոլս 1:28:

IV. Մենք բոլորս պետք է ճանաչենք ու փորձառաբար ապրենք Քրիստոսին՝ որպես մեր շնչերի Հովվի՝ Ա Պտ 2:25.

Ա. Որպես մեր շնչերի Հովիվը՝ Քրիստոսը վերատեսչություն է անում մեր ներքին վիճակի նկատմամբ՝ հոգալով մեր ներքին էության վիճակի համար.

1. Իր օրգանական հովվության մեջ Քրիստոսը գլխավորապես հոգում է մեր շնչի համար՝ Սղմ 23:3:
2. Նա հովվում է մեզ՝ մեր շնչի բարեկեցության համար հոգալով և մեր ներքին էության վիճակի նկատմամբ վերատեսչություն անելով՝ հմմտ Եբր 13:17:
3. Այսպիսի հովվությունը ներքին, խորքային և օրգանական մխիթարություն է՝ Բ Կրթ 1:3-4:

Բ. Քանի որ մեր շունչը շատ բարդ է, մենք կարիք ունենք, որ Քրիստոսը, ով կենդանարար Հոգին է մեր հոգում, մեզ հովվի մեր շնչում՝ մեր մտքի, զգացմունքի և կամքի, ինչպես նաև մեր խնդիրների, կարիքների և վերքերի համար հոգալու նպատակով՝ Հվի 14:16-17, Ա Կրթ 15:45բ, 6:17.

1. Որպես մեր պնևմատիկ Հովիվը՝ Քրիստոսը հոգում է մեզ համար մեր հոգու ներսից.

ա. Նրա հովվությունը սկսվում է մեր հոգուց և տարածվում է դեպի մեր շնչի յուրաքանչյուր մաս՝ Եփս 3:17:

բ. Մեր հոգուց Քրիստոսը հասնում է մեր շնչի բոլոր մասերին և հոգում է մեզ համար քնքուշ, օրգանական, համաբովանդակ կերպով՝ Ա Թսղ 5:23:

2. Սա պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու ներքին հովվությունն է, ով միություն և ընդհանրականություն է կազմել Իր վերածնված հավատացյալների հետ՝ Բ Կրթ 13:14, Հվի 3:6, 14:20, Հռմ 8:16:

V. Աստծու հոտը հովվողները պետք է Աստծու համաձայն հովվեն՝ Ա Պտ 5:2, Փլպ 1:21ա.

Ա. Աստծու համաձայն հովվել նշանակում է հովվել ըստ Աստծու բնության, ցանկության, ճանապարհի և փառքի, այլ ոչ թե ըստ մեր նախասիրության, շահերի, նպատակի և նախահակման՝ Բ Պտ 1:4, Եփս 1:5, 9, 3:21, Հվի 14:6:

Բ. Ա Պտ 5:2-ում «Աստծու համաձայն» արտահայտությունը նշանակում է, որ մենք ապրում ենք Աստծուն. միայն Աստծուն ապրողները կարող են Աստծու համաձայն հովվել.

1. Աստծու տնտեսությունն այն է, որ Նա Իրեն ներդնի մեր մեջ, որպեսզի մենք ստանանք Նրան՝ որպես մեր կյանքի ու կենսամատակարարման, և դրանով իսկ ապրենք Նրան՝ Հվի 11:25, 6:48, 57:

2. Մենք մասնակցում ենք աստվածային կյանքին և աստվածային բնությանը, որպեսզի կարողանանք մեր մարդկայնության մեջ ապրել Աստծուն՝ Գղտ 2:20:

Գ. Աստծու համաձայն հովվելու համար մենք պետք է դառնանք Աստված կյանքով, բնությամբ, արտահայտությամբ և գործառույթով, բայց ոչ Աստվածությամբ՝ Կղս 3:4, Բ Պտ 1:4.

1. Մենք պետք է բերնեբերան լցվենք աստվածային կյանքով՝ վայելելով Եռամեկ Աստծուն՝ որպես ակունքի, աղբյուրի և գետի, որպեսզի դառնանք աստվածային կյանքի հանրագումարը, նույնիսկ դառնանք հենց աստվածային կյանքը՝ Հվի 4:14, Կղս 3:4:

2. Մենք պետք է դառնանք Աստված՝ Նրա սիրո, լույսի, արդարության և սրբության հատկանիշներում՝ Ա Հվի 4:8, 1:5, Հռմ 3:21, 25-26, Եփս 1:4, 5:27, Ա Պտ 1:15-16:

3. Մենք պետք է Քրիստոսի վերարտադրությունը լինենք, Աստծու արտահայտությունը, որպեսզի մեր հովվության մեջ արտահայտենք Աստծուն, ոչ թե մեր «ես»-ը՝ դրա նախահակմամբ և տարօրինակություններով հանդերձ՝ Հռմ 8:19, 29, Բ Կրթ 3:18, Մտթ 16:24:

4. Մենք պետք է Աստված դառնանք Աստծու հոտը հովվելու Նրա գործառույթով այն բանի համաձայն, ինչ Նա է, և Նրա տնտեսության նպատակի համաձայն՝ Եփս 1:10:

Դ. Եթե ուզում ենք Աստծու համաձայն հովվել, պետք է Աստծու հետ մեկ դառնանք՝ Հվի 14:20, Ա Կրթ 6:17.
   1. Աստվածաշնչում առկա հիմնական սկզբունքն այն է, որ Աստված Իր տնտեսության մեջ Իրեն մեկ է դարձնում մարդու հետ և մարդուն՝ Իր հետ՝ Հվի 15:4, Ա Կրթ 6:17:
   2. Աստված ուզում է, որ աստվածային կյանքն ու մարդկային կյանքը միանան, մեկ կյանք դառնան, որը մեկ ապրելակերպ ունի՝ Հվի 6:57, Գղտ 2:20:
   3. Երբ մեկ ենք Աստծու հետ, դառնում ենք Աստված կյանքով և բնությամբ, և Աստված ենք ուրիշներին մեր հովվելու մեջ՝ Ա Հվի 5:11-12, Բ Պտ 1:4, Ա Պտ 5:2:

VI. Ուրիշներին Աստծու համաձայն հովվելու համար մենք պետք է հովվող կյանքով ապրենք՝ Հվի 21:15-17, Բ Կրթ 6:1-13, 7:2-3,

Ա. Որքան շատ կազմվենք Քրիստոսով, այնքան շատ ինքնաբերաբար կապրենք հովվող կյանքով, քանի որ Քրիստոսի կազմությունը մեր հոգևոր կյանքում հովվող տեսանկյուն ունի՝ Կղս 1:27, 3:10-11, 14, Հվի 21:15-17:

Բ. Հովվող կյանք ունենալու համար մեզ ընդլայնված սիրտ է անհրաժեշտ, սիրտ, որն ընդունակ է ընդգրկելու Աստծու բոլոր մարդկանց՝ Բ Կրթ 6:11-13, 7:2-3, հմմտ Գ Թգ 4:29:

Գ. Հովվող կյանքը կյանք է, որ ջերմացնում է ուրիշներին՝ փայփայելով նրանց Հիսուսի մարդկայնության մեջ, որպեսզի նրանց սնի Քրիստոսի հարստությամբ Քրիստոսի աստվածայնության մեջ՝ Եփս 5:29, Առկ 25:15:

Դ. Հովվող կյանքը համապիտանի կյանք է. այն պիտանի է ցանկացած իրավիճակի համար, ընդունակ է ընդունելու ցանկացած միջավայր և աշխատելու ցանկացած պայմաններում՝ Բ Կրթ 6:1-13, 7:2-3:

Ե. Մենք պետք է հովվենք Աստծու հոտը՝ համաձայն մեր Հայր Աստծու սիրող ու քնքուշ սրտի և մեր Փրկիչ Քրիստոսի փնտրող ու հովվող հոգու՝ Ղկս 15:1-32:

VII. Հովվությունը, որը կառուցում է Քրիստոսի Մարմինը, փոխադարձ հովվություն է՝ Ա Կրթ 12:23-26.

Ա. Մենք բոլորս պետք է լինենք Քրիստոսի օրգանական հովվության ներքո և մեկ լինենք Նրա հետ, որպեսզի հովվենք միմյանց՝ Հվի 21:15-17:

Բ. Մենք և՛ ոչխարներ ենք, և՛ հովիվներ, որոնք հովվում ու հովվություն են ստանում փոխադարձության մեջ:

Գ. Փոխադարձ հովվության մեջ մենք մեկս մյուսիս հովվում ենք սիրո մեջ՝ Ա Կրթ 13:1-13:

Դ. Այդ փոխադարձ հովվության միջոցով եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը, կկառուցի ինքն իրեն սիրո մեջ՝ Մտթ 16:18, Եփս 1:22-23, 2:21-22, 4:16:

© 2023 Living Stream Ministry